



Մուրադ Փափագեան. «1.5 միլիոնի անունները պարզելու ցանկութիւնը հակահայ քայլ է»



Անդրանիկ Քոչարեանն առանց Նիկոլ Փաշինեանի հրահանգի այդպիսի կարեւոր յայտարարութիւն չէր անի: Այս մասին Text.am-ի հետ զրոյցում ասաց ՀՅԴ Բիւրոյի անդամ, Ֆրանսիայի Հայկական կազմակերպութիւնների համակարգող խորհրդի համահայտագահ Մուրադ Փափագեանը՝ անդրադարձաւ ԲՀ-ական պատգամատր Անդրանիկ Քոչարեանի այն յայտարարութեանը, թէ պէտք է ունենալ այդ 1.5 միլիոն ցեղասպանած ժողովրդի անուն-ազգանունները:

«Հասկանալի է չէ՞ թէ ինչ է տեղի ունենում՝ այս հակահայ քայլով Փաշինեանը հարցականի տակ է դնում Հայրց Յեղասպանութեան իրողութիւնը: Մեզ յիշեցնում են Թուրքիայի կողմից առաջարկած պատմաբանների յանձնարարութիւնը, որը պիտի պատմութիւնը նորից ուսումնասիրէր, որպէսզի որոշէր 1915 թականի դէպքերը ցեղասպանութիւն կարելի է համարել, թէ՛ ոչ: Այս մտտեցումն ամբողջովին անընդունելի է, ցեղասպանութեան փաստն իրողութիւն է, պատմագետներն աշխատել են, 30 երկիր ճանաչել է, վերջ»,- ընդգծեց նա:

Նրա խօսքով՝ Փաշինեանի իշխանութիւնն ամբողջութեամբ յանձնել է հայ ժողովրդի թշնամիներին ընդունելով, թէ Տաուշի չորս գիւղերը մաս են կազմում Ադրբեջանին, ընդունելով, որ Արցախը ադրբեջանական տարածք է, հարցականի տակ դնելով Հայրց Յեղասպանութեան իրողութիւնը, թշնամիների շահերն է պաշտպանում:

«Ինչ իմաստ ունի հաշիւ ու պարզել 1.5 մլն զոհերի անունները: Երեսակայէն, որ Թուրքիան այս առաջարկը սեղանի վրայ դրած լինէր, ամբողջ հայ ազգը կը դատապարտուէր, չէ՞»,- ընդգծեց նա:

«ԱԼԻՔ» - Բանակի օրայ (Ֆարաբ-դինի 29) առիթով, երկէ՛ ապրիլի 17-ին երկրի տարբեր քաղաքներում կազմակերպւել են յատուկ միջոցառումներ:

Օրայ գլխատր միջոցառումը տեղի է ունեցել մայրաքաղաք Թեհրանում, որի ընթացքում Հանրապետութեան նախագահ այաթ. Սէյէդ Էբրահիմ Ռէիսին եւ երկրի ռազմական բարձրաստիճան հրահանգները ընդունել են Բանակի ընտրեալ ստորաբաժանումների շքերթը:

Երոյթ ունենանով Բանակի օրան նիւրած արարողութեան ժամանակ, նախագահ Ռէիսին բարձր գնահատելով Բրանի ՁՈՒ-ի մարտական եւ բարոյապատկանական պատրաստածութիւնը, նշել է, որ տարածաշրջանի երկրները կարող են ապահիւնել Բրանի Ձինւած ուժերին:

Նա ասել է, որ Բսլամական յեղափոխութեան շնորհիւ Բրանի Ձինւած ուժերն այժմ ինքնաբաւ են բոլոր տեսակի անօդայն թռչող սարքերի եւ սեփական արտադրութեան հրթիռների առումով:

Ռէիսին բարձր է գնահատել ՁՈՒ-ի համախմբւածութիւնը, որոնք դժարին պահերին եղել են ժողովրդի կողքին, ինչպէս նաեւ ապահովել տարածաշրջանի անվտանգութիւն ու խաղաղութիւնը:

Անդրադառնալով սինիստական ռեժիմի վրայ Բրանի պատասխան ռազմական յարձակումներ՝ Հանրապետութեան նախագահն ասել է, որ դա սինիստների պատժելու համար իրականացած սահմանափակ, ճշգրիտ գործողութիւն էր:

«Եթէ դա լայնածաւալ գործողութիւն լինէր, այդ ռեժիմից ոչինչ չէր մնայ», - յայտարարել է նախագահը՝ յստակեցնելով. «Միոնիստական ռեժիմի կողմից մեր երկրի վրայ ցանկացած ոտնձգութիւն կարժանանայ հուժկու եւ դաժան պատասխանի»:


Ընկեր Ալբերտը՝ «ԱԼԻՔ»-ում



Երկէ՛ ապրիլի 17-ին թերթիս խմբագրութիւն այցելեց «ԱԼԻՔ» օրաթերթի արտոնատեր, ազգային-հասարակական վաստակատր գործիչ Ալբերտ Աճեմեանը, իր դատեր Արփի Աճեմեանի ընկերակցութեամբ:

«ԱԼԻՔ»-ի գլխատր խմբագիր Արամ Ծահնագարեանի եւ Վարուժ Յովհաննիսեանի հետ զրոյցի ընթացքում, ընկեր Ալբերտը ծանօթացաւ թերթիս աշխատանքների ընթացքին:

Ձրոյց ծաւալեց հայութեանը յուզող օրակարգային թեմաների եւ առկա քաղաքական վիճակի վերաբերեալ:



«Ամենագեղեցիկը, որ մենք կարող ենք զգալ, դա գաղտնիութեան զգացողութիւնն է: Այն իւրաքանչիւր արւեստի եւ գիտութեան աղբիւրն է: Նա, ով երբեք չի ապրել այդ զգացողութիւնը, նա, ով երբեք կանգ չի առել եւ չի մտորել համակրած երկչոտ խանդավառութեամբ՝ նման է մահացածի եւ աչքերը նրա փակ են»

Ալբերտ Էյնշտէյն (1879-1955), աշխարհահռչակ տեսաբան ֆիզիկոս, ով զարգացրել է յարաբերականութեան ընդհանուր տեսութիւնը՝ ֆիզիկայի երկու հիմնաստիւններից մէկը Ապրիլի 18-ն Էյնշտէյնի յիշատակի օրն է

Նախագահ Ռէիսի. «ՏԱՐԱՃԱՇՐՋԱՆԻ ԵՐԿՐՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ԱՊԱԻՆԵԼ ՉՈՒ-ԻՆ»

«ԱԼԻՔ» - Բանակի օրայ (Ֆարաբ-դինի 29) առիթով, երկէ՛ ապրիլի 17-ին երկրի տարբեր քաղաքներում կազմակերպւել են յատուկ միջոցառումներ:

Օրայ գլխատր միջոցառումը տեղի է ունեցել մայրաքաղաք Թեհրանում, որի ընթացքում Հանրապետութեան նախագահ այաթ. Սէյէդ Էբրահիմ Ռէիսին եւ երկրի ռազմական բարձրաստիճան հրահանգները ընդունել են Բանակի ընտրեալ ստորաբաժանումների շքերթը:

Երոյթ ունենանով Բանակի օրան նիւրած արարողութեան ժամանակ, նախագահ Ռէիսին բարձր գնահատելով Բրանի ՁՈՒ-ի մարտական եւ բարոյապատկանական պատրաստածութիւնը, նշել է, որ տարածաշրջանի երկրները կարող են ապահիւնել Բրանի Ձինւած ուժերին:

Նա ասել է, որ Բսլամական յեղափոխութեան շնորհիւ Բրանի Ձինւած ուժերն այժմ ինքնաբաւ են բոլոր տեսակի անօդայն թռչող սարքերի եւ սեփական արտադրութեան հրթիռների առումով:

Ռէիսին բարձր է գնահատել ՁՈՒ-ի համախմբւածութիւնը, որոնք դժարին պահերին եղել են ժողովրդի կողքին, ինչպէս նաեւ ապահովել տարածաշրջանի անվտանգութիւն ու խաղաղութիւնը:

Անդրադառնալով սինիստական ռեժիմի վրայ Բրանի պատասխան ռազմական յարձակումներ՝ Հանրապետութեան նախագահն ասել է, որ դա սինիստների պատժելու համար իրականացած սահմանափակ, ճշգրիտ գործողութիւն էր:


«Եթէ դա լայնածաւալ գործողութիւն լինէր, այդ ռեժիմից ոչինչ չէր մնայ», - յայտարարել է նախագահը՝ յստակեցնելով. «Միոնիստական ռեժիմի կողմից մեր երկրի վրայ ցանկացած ոտնձգութիւն կարժանանայ հուժկու եւ դաժան պատասխանի»:



«ԱԼԻՔ» - Զի բացառում՝ Իսրայէլի ճնշումների տակ Ադրբեջանը փորձի լոկալ բախումներ հրահրել Հայաստանի՝ Բրանին սահմանակից վայրերում: Այս մասին 168.am-ի հետ զրոյցում յայտարարել է «Յենակէտ» վերլուծական կենտրոնի ղեկավար, ռազմական փորձագետ Վիտալի Մանգասարեանը, ով անդրադարձել է Հարաւային Կովկասի անվտանգային եւ աշխարհաքաղաքական մի քանի օրակարգային հարցերի:

Անդրադառնալով Բրան-Իսրայէլ կոնֆլիկտին, ինչպէս նաեւ՝ Ադրբեջանի՝ Իսրայէլին 44-օրեայ պատերազմի յաղթանակի համատեքստում պարտքերը մարելու խնդիրներին, Մանգասարեանն ասել է. «Ադրբեջանը շատ մեծ պարտք (Շար. 2-րդ Էջում)

Վիտալի Մանգասարեան. «Զի բացառում՝ Իսրայէլի ճնշումների տակ Ադրբեջանը փորձի լոկալ բախումներ հրահրել Հայաստանի՝ Բրանին սահմանակից վայրերում»



«ԱԼԻՔ» - Զի բացառում՝ Իսրայէլի ճնշումների տակ Ադրբեջանը փորձի լոկալ բախումներ հրահրել Հայաստանի՝ Բրանին սահմանակից վայրերում: Այս մասին 168.am-ի հետ զրոյցում յայտարարել է «Յենակէտ» վերլուծական կենտրոնի ղեկավար, ռազմական փորձագետ Վիտալի Մանգասարեանը, ով անդրադարձել է Հարաւային Կովկասի անվտանգային եւ աշխարհաքաղաքական մի քանի օրակարգային հարցերի:

Անդրադառնալով Բրան-Իսրայէլ կոնֆլիկտին, ինչպէս նաեւ՝ Ադրբեջանի՝ Իսրայէլին 44-օրեայ պատերազմի յաղթանակի համատեքստում պարտքերը մարելու խնդիրներին, Մանգասարեանն ասել է. «Ադրբեջանը շատ մեծ պարտք (Շար. 2-րդ Էջում)

Թեհրանի Առեւտրի պալատում կայացել է Իրանի եւ Հայաստանի միջեւ առեւտրի համագործակցութեան զարգացմանը նւիրւած համաժողով Հայաստանը՝ միցակցային ազատ առեւտրի աշխարհ տանող դարպասը

«ԱԼԻՔ» - 1403 թականի Թեհրանի Առեւտրի պալատի առաջին միջազգային գործարար միջոցառումը նիւրած էր Իրանի եւ Հայաստանի միջեւ տնտեսական համագործակցութեան ամրապնդմանն ուղղւած համաժողովին: Քննարկումների ժամանակ փորձագիտական խմբերն առաջարկներ են ներկայացրել համատեղ արտադրութիւնների հիման վրայ յարաբերութիւնների զարգացման ուղղութեամբ:

Հայաստանի անդամակցութիւնը Եւրասիական տնտեսական միութեանն ու ազատ առեւտրի բացառիկ



նկարաւորութիւնները, հարեւանութեան եւ խորացած քաղաքական յարաբերութիւնները, որպէս առաւելութիւնների միւս կողմը, ինչպէս նաեւ ապրանքների արտահանման համար Եւրոմիութեան եւ ԱՄՆ-ի խրախուսական թեթեւացած մաքսատուրքերի հասանելիութիւնը ներկայացւել են, որպէս եզակի յատկանիշներ՝ Հայաստանի հետ առեւտրա-արդիւնաբերութիւնը զարգացնելու համար:

(Շար. 8-րդ Էջում)

ARAM®
c o f f e e
ԱՐԱՄ
سوپر قهوه آرام
فروشگاه مرکزی:
قائم مقام فراہانی-شماره ۶۳
88303478 ԵՎ 88308730
www.aramcoffee.com
instagram:aram_coffee



Սպահանի հայոց թեմի առաջնորդի այցելութիւնը՝ Շիրազի հայ համայնք



Հինգշաբթի եւ ուրբաթ, ապրիլի 4 եւ 5-ին, Սպահանի հայոց թեմի առաջնորդ Ս. Միսիան արք. Քչէճեանը հովական այցելութիւն կատարեց Շիրազ: Թեմակալ առաջնորդին նշած այցելութեան ընթացքում ընկերակցում էին՝ Ս. Մեսրոպ Աւ. քնյ. Գալստանեանը, Ս. Վարդան քնյ.

Աղաբաբայեանը, սարկաւազները եւ Ս. Ամենափրկիչ վանքի «Կոմիտաս» երգչախմբից կազմած երգեցիկ խումբը: Նշած ժամանակաշրջանում, նախ հինգշաբթի երեկոյեան Թեմակալ առաջնորդը մտերմիկ հանդիպում ունեցաւ տեղի հայ համայնքի հետ, ապա

ուրբաթ հայոց ազգային գերեզմանատանը կատարեց հոգեհանգստեան պաշտօն: Մրբազան Հօր ձեռամբ նաեւ սուրբ եւ անմահ պատարագ մատուցեց քաղաքի «Ս. Աստուածածին» եկեղեցում: **Թղթակից (Նոր Զուլա)**

Ընկեր Հրաչ Զարիֆեանի յիշակատին

ՀՐԱՉ ԶԱՐԻՖԵԱՆ, վաստակաւոր ազգային-հասարակական գործիչ, հաւատարմ գաղափարական:

Մի անուն, որի համար ոչ թէ խօսում են կենսագրական տւեալները, այլ վերջին 50 տարւայ իր գործունէութիւնը:

Յարգած ու սիրած էր Հայ մշակութային «Արարատ» կազմակերպութեան շրջանակում:

Յարգած ու սիրած էր իր կուսակցական ընկերների կողմից:

Մանուկ եւ պատանի հասակից ճաշակեց միութենական կեանքը. եղաւ յանձնատու եւ պարտաճանաչ իրեն վստահած աշխատանքներում:


Երիտասարդ հասակում անդամագրեց Հայ Յեղափոխական Դաշնակցութեան շարքերին եւ մինչ կեանքի վերջը հաւատարիմ մնաց իր դաւանած գաղափարներին:

Բնատրուրութեամբ հանդարտ էր, զուսպ եւ հաշիւեկատ, այդ իսկ պատճառով ամենաբարդ պայմաններում կարողանում էր ճանապարհ գտնել եւ լուծումներ առաջարկել:

Հաւանաբար իր այդ նկարագրից էր, որ Իրան-Իրաք պարտադրեալ պատերազմի օրերին, թէեւ առաջնագծում էր, սակայն ամենաբարդ պայմաններում կարողացաւ յաղթահարել մահը:

Երկար տարիներ եւ տարբեր շրջաններում եղել է Հայ մշակութային «Արարատ» կազմակերպութեան բազմաթիւ միատրների, յանձնախմբերի եւ Կենտրոնական վարչութեան անդամ:

Կուսակցութեան մէջ նաեւ նոյնն էր: Երկար տարիներ աշխատել է տարբեր յանձնախմբերում, եղել է Կենտրոնական կոմիտէի անդամ, Հայ Դատի գրասենեակի վարիչ եւ յանձնախմբի ու ազգային կառույցների անդամ:



Եղել է նաեւ «Ալիք» օրաթերթի տնօրէն:

Վերջին տարիներում իր առողջական վիճակի պատճառով փորձում էր յանձնարարութիւններ չստանձնել, սակայն յանձնառու էր, երբ ինչ որ աշխատանք էր ստանձնում:

Երբ զաւակները որոշեցին հարեւիրքում բնակել, ինքն ու Լիդան եւս որոշեցին Հայաստան տեղափոխուել:

Ուրախ եւ երջանիկ էր իր ընտանիքը համախմբած տեսնելով: Հայաստանում եւս ստանձնեց պարտականութիւններ: Սակայն այդ երջանկութիւնը կարճատեւ եղաւ:

Կարճ ժամանակում անողորմ հիւանդութիւնը քայքայեց նրա առողջութիւնը եւ այս անգամ նա չկարողացաւ յաղթահարել մահը:

Մեր շատ սիրելի ընկեր Հրաչ, կը յիշուէ որպէս յանձնատու եւ պարտաճանաչ Դաշնակցական, եւ քո վաստակը իրանահայ կեանքում կը մնայ որպէս լաւագոյն փաստ, քո գործունէութեան եւ նկրտածութեան:

Քեզ միշտ կը յիշեն ընկերները: Երթաւ բարով դէպի յաւերժութիւն: Հողը թեթեւ լինի վրայ սիրելի ընկեր:

ՀԻՉ Իրանի Հիւսիսային շրջանի ԿԿ

Մայրերի տօնը նշեց Նոր Զուլայի հայոց ազգային մանկապարտէզի յարկի տակ

Երեքշաբթի, ապրիլի 9-ի առաւօտեան, Նոր Զուլայի հայոց ազգային մանկապարտէզի շրջափակում, ներկայութեամբ սաների մայրերի եւ տատիկների, նշեց Մայրութեան եւ գեղեցկութեան տօնը: Օրագրում նախ օրան պատշաճ խօսքով հանդէս եկաւ մանկապարտէզի տնօրէնուհի Արփիմէ Յովսէփեանը: Ահա մի հատուածի մէջբերում բացման խօսքից. «Մայրական սիրոյ մասին բազմիցս խօսել է եւ ոչ ոք չի կակաճում որա անկեղծութեանն ու մարտութեանը: Մայրը ոչ միայն քնքշանքի աղբիւր է, այլ նաեւ բարութեան ու մեծահոգութեան ուսուցիչ, ով կարողանում է խստութիւններին եւ դաստիարակչական կանոններին զուգահեռ, իր զաւակին ներշնչել ամենագեղեցիկ գագացումները»: Շարունակութեան մէջ դպրոցի մանկապարտէզի եւ նախակրթարանի սաները գեղարուեստական յայտագրով ելոյթ ունեցան, որը յա-

զեցած էր մայրերին նկրած երգերով, արտասանութիւններով ու պարերով: Այնուհետեւ զարճալի խաղ-մրցոյթներ իրականացեցին սաների եւ իրենց մայրիկների մասնակցութեամբ, իսկ տնօրէնուհու եւ Կրթական խորհրդի անդամ Սաթենիկ Աւետումեանի միջոցով գնահատագրեր շնորհեցին ընթացիկ տարւայ փետրարին դպրոցի կազմակերպած հեթիաթասացութեան փառատօնին մասնակից սաներին ու իրենց տատիկներին: Վերջում մայրիկներին նկրեցին ծաղիկներ, իսկ ներկաները վայելեցին նախատեսւած հիւրասիրութիւնը: **Թղթակցութիւնը կազմեց օրաթերթի Նոր Զուլայի թղթակցիցը՝ կազմակերպիչների գեկոյցի համաձայն Լուսանկարները՝ Գեկիկ Խաչատրեան**



